

տիրոս վարդապետին և Յովհաննէս վարդապետին եւ Մարկոս վարդապետին եւ մարմնաւոր ծնողներու... Անոնք որոնք գողնալով այս գիրքը (դուրս) հանեն Շէնֆուշէն, նգովեալ ըլլան ԳձԺԸ (318) հայրապետներէն⁷ եւ ԺԲ (12) մարգարէներէն եւ ԺԲ (12) առաքելներէն եւ ԺԲ (12) աստուածաբան վարդապետներէն, եւ Սուրբ Երրորդութենէն, եւ Քրիստոսի օրհնեալ բերանէն, նաեւ ինձմէ՝ Մինաս վարդապետէս, հոգւով եւ մարմնով կապուին այս եւ գալիք աշխարհին մէջ... ամէն: Գրուեցաւ Հայոց ՌձԽԶ (1697) քրեականին Յունիս Ժ (10)ին, իմ՝ Մինաս վարդապետիս ձեռնով, Ս. Էջմիածնի մէջ, Տէր Նահապետի կաթողիկոսութեան ժամանակ» (Թորոս Աղբար, Բ. էջ 485-486, Թ. 43, Մեկնութիւն Սորհրդոյ Պատարագի ի Ներսիսէ Լամբրոնացոյ):

Ի՞նչ անաւոր անէ՞ծք՝ չնքուչիական արժէքի մը զողացողին եւ որպիսի՝ անձնանուէր զոհարելութիւն ու զօրովալի սէր Չնքուչին ու չնքուչիներուն...

Հիմա, որ մորթոտուած է հայ Ձեմուշը եւ յաւիտ կորած անոր մատենագրական արժէքները, մարդ կը տարուի մտածելու, թէ երանի՜ Ամթեցին այնքան չափ չսիրէր Չնքուշը, թոյլ տար որ մնար Լամբրոնացու այդ գլուխ-գործոց մատենար Էջմիածնի մէջ, այսօր դուցէ այն եւս (ինչպէս 1586ին Չնքուշի մէջ՝ դըրուած Չնքուշի Գասպար զրէի Շարակնոցը) ազատուած կ'ըլլար փճացումէ ու կը պահպանուէր Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ ու, աւելին, Ձեմուշապատումին համար ապահովուած կ'ըլլար՝ Չնքուշի վանուց վարդապետարան-գլխոցի հիմնադիր Մեծն Մարտիրոս Չնքուշի (որոյ գոն ծրեալ մա-

տանց նորին յոյով գրեանք ի սուրբ վանքս եւ եկեղեցին որ ի Շէնֆուշէն - Թ. Ա. Բ. էջ 458) մէկ ձեռագիր գործը: Ի դէպ, Մեծն Մարտիրոս իր օրինակած զրքին սեմնէլի յիշատակարան մ'ալ կցած է, որը պիտի երևի Ձեմուշապատումին մէջ:

* * *

Լուսարանութեան կարօտ կէտ մը եւս: Մինաս Ամթեցի՝ Եպիսկոպոս օծուած ըլլալով Թոխատի վրայ, անոր առաջնորդութեան ութ տարիներուն (1666-74) Թոխատի մէջ իրեն աշակերտած ծանօթ զրէիներ՝ Միքայէլ Թոխատցին եւ Միլըրտիչ (կամ Մկրտում) Չուղայեցին, իրենց բազմաթիւ յիշատակարաններուն մէջ (1678-1696) զայն կոչած են «արհեստիկոսութեան Եպիսկոպոսի» եւ «արհեստիկոսութեան Եպիսկոպոսի» Բաղաբի: Որպէս զի սխալ մեկնութիւն չտրուի այս երեւոյթին, չեղանք, թէ այդ տիտղոսները բովանդակող յիշատակարանները զրուած տարիներուն՝ Ամթեցին Թոխատի առաջնորդ եղած չէ, այլ Թոխատի մէջ իրեն աշակերտած այդ զրէիները անոր տուած են այդ տիտղոսները՝ Թոխատի վրայ ձեռնադրուած ըլլալուն համար - սոյն-յուրեւն մը, որ Ե. զարէն սկսեալ դուրսէն ունեցած է Հայոց մէջ եւ ներկայիս ալ առկայ է բոլոր քաղաքակիրթ երկիրներուն մէջ:

(Վերջ)

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

7. Կ'սկսեալէ 325 թուականին Կոստանդիանոսի հրաւերով Նիկիոյ մէջ զուգարուած Տիեզերական Ժողովին, որուն 318 հայրապետներուն մէջ էր նաեւ Հայոց Արիստակէս Հայրապետը, Գրիգոր Լուսաւորչի որդին:

ՎԱՏԻԿԱՆԵԱՆ Բ. ԺՈՂՈՎԻ ՀԵՏԻՄԵՐՈՎ

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԿՐԾՆՔԸ

Բազմաթիւ ազգակներէ կը պայմանաւորուի քաղաքակրթութեան մը զարգացումը, որոնք գէթ մասամբ՝ կը բնորոշեն նաեւ անոր նկարագիրը:

Քաղաքակրթութիւն մը, իր ամբողջութեան մէջ, կ'արտայայտէ մարդկային հոգին, արդիւնք է եւ հայեարացում մը՝ անոր յղացքներուն եւ ձգտումներուն, կարիքներուն եւ պահանջներուն, պատմական որոշ ժամանակաշրջանի մը մէջ:

Դիւրին չէ ճշգրիտ եւ անթերի դնահատանք մը կատարել՝ քաղաքակրթութեան մը զիմագիծը բնորոշող ազդեցութիւններուն տարողութեան եւ հետեւանքներուն, երբ մանաւանդ խնդրը ժամանակակից իրողութեան մը կը վերաբերի: Ասով իրողութեան մը կը վերաբերի: Ասով հանդերձ, տարբեր խառնուածքով եւ ձեւերով, կամ տարբեր զարգացման աստիճաններով, կամ հայեցակէտերէ բախօտութիւններէ ու հայեցակէտերէ մեկնող անձեր համաձայն կը թուին վրձնական գեր մը վերագրելու մէջ՝ որոշ երեւոյթներու, քանի որ դարձեալ մտածելակերպին եւ աշխարհայեացքին ներկայացումը. այսպէս կը թուեն բազմապատկեր մը՝ ամէն տեսակ հաղորդակցութեան միջոցներու, նոր յարաբերութիւններու երեւումը՝ անհատին եւ ընկերութեան միջեւ, մանաւանդ ծաւալումը «ընկերայնացումի» (socialisation) երեւոյթին, տնտեսական բարդաւածումը, զիտար-ուստի (technique) տիրապետութիւնը՝ մարդկային կենցաղավարութեան բոլոր խաւերուն մէջ, եւն. մինչ կարելի է այս խաւերուն մէջ, եւն. մինչ կարելի է այս խաւերուն մէջ հասարակաց արտադրիչ բոլորին իրրեւ հասարակաց արտադրիչ նկատել զիտութիւններու հսկայաքայլ յառաջադիմութիւնը: Ասոնք կը միտին

նոր զիմագիծ մը տալու մարդկութեան, կը թափանցեն անոր իմացական, հոգե-րանական, գրական ու գեղարուեստական բոլոր արտայայտութիւններուն մէջ: Նոր «հիմանիդ» մը կը կերտուի, իրրեւ առանցք ունենալով մարդը՝ տիեզերքի զաղտնիքները որոնելու եւ անոր տիրելու տենչով առցուն. աւելի խորացնելով, պիտի ըսենք մարդը՝ զիտակից ու նախանձախնդիր աւելի քան երբեք իր ար-ժանապատուութեան եւ ազատութեան:

Հոս սակայն կը սկսին տարակարծութիւնները, երբ մարդիկ կը փորձեն աւելի մասնական եղբայրով սահմանել իրենց այս առանձնաշնորհութիւններուն հարա-դատ պահանջները:

Մարդկութեան ստուար զանգուածի մը համար, իրրեւ անհրաժեշտ պայման կը ներկայանայ անոնց լիով իրականացումին՝ բացարձակ անկախութիւն մը գերազոյն ու գերանցական (transcendant) սեւէ չափէ կամ օրէնքէ. մանաւանդ թէ այդպիսի կախումաւորութիւն մը հերքուած կը թուի իրենց նոյն ինքն արդի քաղաքակրթութեան զգլխիչ ընթացքն անպատշաճ՝ յառաջագիտ ու նախապաշարութեանէ ձերբազատուած ընկերութեան մը:

Անոնք որ այսպէս կը խորհին՝ չեն անգիտանար, ոչ ալ ուղղակի զիտում ունին ուրանալու թէ կրօնքը, իմացական գերազոյն չափի մը, ուրիշ խօսքերով՝ Աստուծոյ մը զաղափարը եւ պաշտամունքը, կանգնած են զարեւոյթ քաղաքակրթութիւններու հորիզոնին վրայ՝ իրրեւ բացայայտ կամ լռելեայն վերաբերումի

կէտ մը՝ մարդուն հոգեկան ու մտաւոր, գեղարուեստական ու մշակութային բոլոր գրեւորութեան, արմատացած՝ ժողովուրդներու եւ անհատներու կեանքին մէջ, իմաստաւորած եւ լուսաւորած՝ անոնց գոյութիւնը:

Մարդկային հոգեւոյն այսքան կենսական պահանջի մը ժխտումը, կամ անտարբեր կեցուածք մը անոր հանդէպ, կը պահանջեն, անտարակոյս, բացատրութիւն մը, վերլուծումի ճիշդ մը՝ թափանցելու անոնց ծնունդ տուող շարժառիթներու եւ կենսական պայմաններուն մէջ: Այս հարկը աւելի ստիպողական բնոյթ մը կը ստանայ, մինչ վերոյիշեալ վերաբերումները՝ կրօնքի նկատմամբ՝ կը թափանցեն ու կը ծաւալին ընկերութեան ընդարձակ խաւերու մէջ: Այլեւս սահմանափակուած չեն խումբ մը անձերու, այլ զարձած հանրային երեւոյթ մը: Մարդկային գիտակցութեան մէջ, զանդուածային այսպիսի յայտնութիւններու առջեւ, ուղիղ պիտի չըլլար լոկ հակաճառական դիրք մը որդեգրել. հասկացողութենէ զուրկ, զանոնք պարզապէս լաւ տրամադրութիւններու, լրջութեան եւ կամ նման գրական տուեալներու պակասին վերադրելով: Այս պակասն ալ կրնայ ունենալ անշուշտ իր վճռական դերը. բայց նման երեւոյթներ յաճախ արդիւնք են նաեւ հոգեկան խոր եւ թաքուն պահանջներու, հակադեցութիւն մը՝ մարդկային որոշ արժէքներու խեղաթիւրումին դէմ:

Նկատելով կեանքի արդի պայմանները, ինչպէս նաեւ «technique»-ի ստեղծած մտայնութիւնն ու մտածելակերպը, կարելի պիտի ըլլայ գուցէ գէթ մասամբ դոհացուցիչ բացատրութեան մը յանդիլ՝ անաստուածութեան եւ կրօնական անտարբերութեան ժամանակակից մարդկութեան կողմէ գոտած ընդունելութեան նկատմամբ:

* * *

Մեքենարուեստի տիրապետութիւնը կանխող դարերուն, մարդը բնութեան առջեւ ինքզինքը կը գտնէր՝ բնութեան հետ ուղղակի եւ անմիջական շփումի

մէջ. նոյնիսկ երբ կ'ապրէր քաղաքի մը որմերէն ներս, իր այս յարաբերութիւնը բնութեան հետ չէր կրեր էական ալլափոխութիւն մը: Ինքն ալ անշուշտ կը կերտէր զործիքներ, կը ջանար զանոնք կատարելագործել, ունէր տարրական մեքենարուեստ մը. բայց սակաւ ի զօրութիւն տիրապետելու եւ խեղդելու մարդուն եւ բնութեան միջեւ նախնական յարաբերութիւնը:

Մեքենարուեստի քաղաքակրթութիւնը մարդը կը դետեղէ ո՛չ թէ բնութեան մը առջեւ, ուր ան ինքզինքը եկուոր մը կը զգայ՝ ենթակայ անոր խաղերուն, այլ իր իսկ ձեռքերուն ստեղծագործութեան դիմաց. ստեղծագործութիւն մը՝ մարդուն հանձարին եւ ձիրքերուն, ենթակայ անոր կամքին, որ ուժ անիկա անախընթաց փորձառութիւն մը կ'ունենայ իր կարելութիւններուն, մեծութեան եւ անկախութեան: Այսօրուան մարդը, նոյնիսկ երբ կ'ապրի գիւղական միջավայրի մը կեանքը, բնութեան հետ իր հաղորդակցութիւնը իրականացած կը տեսնէ ճարտարարուեստի եւ մեքենարուեստի ստեղծագործութիւններու միջոցով: Իսկ առանձին, իրենց կարգին, յաճախ աւելի անմիջական յարաբերութիւն մը կը ստեղծեն մարդուն եւ ընկերութեան միջեւ, որ զանոնք կ'արտադրէ, քան մարդուն եւ բնութեան:

Բնութիւնը՝ որ իրրեւ ասպնջական մը կը ներկայանար մարդուն, որուն ահագնութիւնը հիացում եւ սարսափ կ'ազդէր անոր, զայն գիւրաւ կ'առաջնորդէր իր Արարչին. մանաւանդ թէ մարդիկ յաճախ նոյն ինքն բնութիւնը իրրեւ անձնաւորութեան: Բնութեան նկատմամբ նախապաշարումներու եւ աւելորդապաշտութիւններու փարատելով, նոր տարրի մը ներմուծուելով մարդուն եւ բնութեան միջեւ, բնականօրէն պիտի զօռաւորէր մարդկային մտքին՝ բնութեան ծոցին մէջ Աստուծոյ մը հետքերը նշմարել, պիտի նուազէր հետզհետէ բնութեան թափանցելութիւնը՝ իրրեւ հայելացում մը

վերանցական կատարելութիւններու: Աննկատ կարելի չէ ձգել նաեւ թէ մեքենացած կեանքի մը կշռոյթը, որ միշտ աւելի կը պարտադրուի գիտարուեստի տիրապետութեամբ, կը նուաղեցնէ մարդուն մէջ ինքնակեդրոնացումի կարելիութիւնը, այնքան անհրաժեշտ՝ Աստուծոյ հետ անձնական շփումի մը համար:

Բայց գիտութեան եւ մեքենարուեստի զարգացումը չի ստեղծեր միայն կեանքի նոր ձեւեր ու պայմաններ, այլ կը կերտէ նաեւ նոր մտայնութիւններ ու մտածելակերպեր, կը ձուլէ մտային նոր կազապարներ:

Մեքենարուեստը՝ հիմնուած հաշիւի եւ փորձառութեան վրայ, յաղթանակը նշանակեց փորձառական գիտութիւններու՝ մինչեւ իսկ զարդակային կրթութեան մէջ: Ժամանակակից մարդուն մտայնութիւնը էապէս փորձառական մտածելակերպէ մը կը դեկավարուի: Դժուար չէ ըմբռնել թէ որքան անբնական կրնայ թուիլ այս ձեւով կազմուած մտքի մը՝ Աստուծոյ դադափարը, որ կը խուսափի աւելի փորձառութենէ: Փորձառութեան սէրը այնքան թափանցած է արդի մարդուն մտածելակերպին մէջ, որ նոյնիսկ երբ կը դրադի ան մարդուն վերաբերող հարցերով, կամ կը նուիրուի իմաստասիրական մտածութեան, կը սիրէ միշտ մեկնիլ փորձառական տուեալէ մը, ապրուած իրականութենէ մը, ըլլայ ան ներքին կամ արտաքին: Բնազդային հակակրօնք մը ունի վերացական պատճառաբանութեան ոճին դէմ, որ այնքան սիրելի էր յունահռոմէական ու միջին դարերուն, բանաստեղծութեան եւ զաղափարապաշտ շրջաններու մարդուն: Իմաստասիրական ընդարձակ հոսանքներ չեն վարանիր իմաստէ զուրկ կամ կեանքի իրականութենէն տարանջատ որակելու բնազդանցական սկզբունքներ, որոնք զարեւրէ ի վեր նկատուած էին իրրեւ անառարկելի փաստեր Աստուծոյ գոյութեան:

Անտարակոյս սխալ պիտի ըլլար մեքենարուեստի տիրապետութիւնը իրրեւ միակ կամ գլխաւոր ազդակը համարել մը

տածելակերպի այս փոփոխութեան. մանաւանդ իմաստասիրական մարդին մէջ, էական դեր մը կատարած են զուտ մշակութային կարգի պատկանող ազդակներ: Կարելի չէ, սակայն, մերթել թէ մեքենարուեստի ազդեցութիւնը բոլորովին վճռական հանդիսացած ըլլայ փորձառական գիտութիւններու ստանձնած առաջնակարգ կարեւորութեան նկատմամբ՝ ընկերութեան արդի կարգուսարքին մէջ, որ բնականօրէն կ'ազդէ թէ՛ անհատներու եւ թէ՛ մշակութային ուղղութիւններու վրայ:

Կեանքի պայմաններու եւ մտածելակերպերու այս յեղաշրջումին առջեւ, կրօնքը շատերու համար ժամանակավրէպ երեւոյթ մը կը դառնայ, հնախօսական առարկայ մը՝ բաղդատուած մարդկութեան յարաճուն փոփոխութիւններուն եւ յառաջագիմութեան հետ: Կապուած առհասարակ դարաւոր վարդապետութեան մը, կաշկանդելով կարծես ազատ սլացքը անհատներու մտածութեան, ան նախախտիկ օրինակ մը կը թուի ըլլալ մտքի կայունութեան ու լծացումի: Փնտռուութի սէրը, որոնումի մղձաւանջն է, որ թուիլի հմայք մը կը բանեցնեն այսօրուան մարդուն վրայ, եւ կրօնքը կարծէք կը թուի կասեցնել ճիշտ այդ խանդավառ թափը:

Գիտութիւններու եւ քաղաքակրթութեան արագ ընթացքը նոր փորձառութեամբ մ'ալ ճոխացուցած են մարդկային մտքին պաշարը. այն է՝ աւելի ապրուած գիտակցութիւն մը իրերու եւ վարդապետութիւններու յարաբերականութեան: Յարաբերականութիւն մը՝ զոր կարելի չէ նոյնացնել առանց այլեւայլի սկեպտիկ եւ յուսահատ յարաբերապաշտութեան մը հետ: Մինչ սակաւ կ'ուրանայ մարդուն մէջ որեւէ կարելիութիւն ճշմարտութեան մերձեանալու, վերոյիշեալ յարաբերականութիւնը կը վարանի պարզապէս վերադրել մարդուն վերջնական եւ բացարձակ տիրացում մը ճշմարտութեան: Հասուն մարդկութեան մը վայել կը թուի սակաւ: Պատմութեան բեմէն անցած են հանձար-

ներ ճշմարտության փնտրումը մեզ համար իրենց հետքերը չեն թողել: Բայց ո՞վ կրնայ յառաջիկայի սպասած ըլլալ մարդկային մտքին խուզարկումի կարելիությունները:

Պատմության բոլոր հանգրվաններում, մարդուց ամենամեծ փորձություններն էին մեզ կողմից դուրս բերված իրերի մեջ փնտրումը՝ եղբայրություններում, դադարներից կամ անձնական մեջ, որոնք յաճախ անյայտացած են պատմության բնույթի, կամ առիթ եղած՝ իրենց հետևողներին համար դառն յուսախաբություններ: Սակայն քիչ անգամներ այնքան խոր եղած ըլլալու է մարդկության այս փորձությունը՝ որքան քսաներորդ դարում: Առաջին հարուստը դիտությունն էր կու դար: Հաղորդվածները «գիտության առասպել» (mythe de la science) դարձրել հանդիսացած էր. գիտությունը յաղթանակ էր յաղթանակ կը սուրբար, զիտեր գիտությունը վրայ կը բարդուէին, եւ շատեր կը յուսային գիտության մեջ գտնել մարդկությունը վրդովող բոլոր հարցերու բանալին: Կը ծագէր այսպէս «գիտնապաշտութիւնը» (scientisme), կեանքի հանդէպ նիւթապաշտ աշխարհահայեացք մը: Հակադրեցին այս կոյր յաւակնութեան դէմ անուանի իմաստասէրներ, ինչպէս Պերկսոն մը. բայց գիտութիւնը ինքնին վճռական հարուստ մը պիտի տար անոր: «Քուսանդ»ներու գիտութիւնը մանաւանդ Այնշթայնեան յարաբերականութիւնը դադարներից հիմնական յեղափոխութիւն մը կը բերէին, գրեթէ աննախատեսելի դործնական հետեւանքներով ծանրաբեռնուած. կը քանդէին ոչ լոկ ժամանակակիցներէ անայլայլելի կարծուած գիտական դրութիւններ, այլ Այնշթայնի յարաբերականութեամբ կը ձեւափոխուէր մարդկային գիտակցութեան ամէնէն բացայայտ եւ նախնական տուեալներէն մէկը՝ ժամանակի դադարիւր: Կարելի՞ էր այլեւս մարդկային ծանօթութիւններու մէջ վստահիլ բացարձակ մը գոյութեան:

Գիտության առթած այս յուսախաբությունները չէին հասնիր, անշուշտ, պայ-

մանաւորելու դանդաղներու կարծիքը: Բայց չէր յամեր անոնց վրայ բարդութեւն համաշխարհային դոյզ պատերազմներու աղետալի փորձառութիւնը, որ խրնդրոյ առարկայ կը դարձնէր՝ այլեւս ոչ լոկ գիտական կամ բնական ծանօթութիւններ, այլ նոյնինքն մարդկային դործունէութիւնը ներքին զարթոնքներու, որ արմատական վերափոխութեան մը կ'ենթարկուէր:

Այս միջոցառումն մէջ ամէնէն անախորժ ու խրտհեցողից արամադրութիւնը շատերու համար, տեսակ մը անհանդուրժողութիւնն է, անհասկացողութիւնը, փակ, մեկուսացող, ժխտական վերաբերում մը՝ ուրիշներու որդեգրած արժէքներուն, ընդգրկած դադարներից ներկայումս. ճշմարտության սեպհակախորհրդէր կամ բարութեան մեծանորսը ունենալու ինքնաբերական յաւակնութիւնները՝ կը նկատուին տհասութեան ու մոլեռանդութեան նշաններ:

Մարդիկ հետզհետէ աւելի կենդանի գիտակցութիւն մը կը ստանան կարծիքներու եւ դադարներից, ու մանաւանդ մշակոյթներու իրարու նկատմամբ լրացուցիչ դերին: Կը փափաքին մօտենալ իրարու, մտնել փոխադարձ շփումի մէջ, ճիշտապէս իրարմով՝ դադարներից եւ արժէքներու փոխանակութեամբ, մինչ այս բոլորին կը նպաստեն մեծապէս ընկերային հաղորդակցութեան արդի միջոցները:

Փոխադարձ մերձեցումի փափաքը՝ դերապանցելով մշակութային փոխանակութեան մը սահմանները, կ'արժարժէ նաեւ մարդուց միջեւ իրար աւելի սերտօրէն շղկապող զօդերու փնտրումը մը: Միութեան ձգտումը, համեմատականութեան ու համեմատելիութեան տեսլի խոր արձագանքներ կը գտնեն մարդուց սրտերուն մէջ: Թէեւ աշխարհ տակաւին հեռու է դայն իրադրութիւն կարելիութենէն, թէեւ գործերը յաճախ արամադօրէն կը ներհակին խօսքերուն, կը մնայ սակայն անառարկելի տուեալ մը՝ թէ այսօր քաղաքակիրթ մարդկության մեծամասնու-

թիւնը կը բաղձայ իրականացած տեսնել ոսկեղէն դարերու այդ երազը:

Մարդկության այս նոր եւ արդար ճշգրտումներուն առջեւ՝ կրօնքը իրրեւ պատուար մը բարձրանալու տպաւորութիւնը կը թողու: Իր բացարձակ ու յաւանանահան ճշմարտության մը յաւակնութիւններով, դոր ամէն կրօնք կը ջանայ իրեն սեփականել, ի յառաջագունէ իսկ փակել կը թուի անկեղծ արամախօսութեան մը ամէն կարելիութիւն: Իսկ կրօններու պատմութիւնը, նաեւ կաթողիկէութեան՝ մինչեւ շատ մերձաւոր թուականներ, ոչ հաղորդակցօրէն հակապատկեր մը կ'ընծայէ մարդկութիւնը ողբերգ սիրոյ, հանդուրժողութեան, աղատութեան եւ խաղաղութեան տեսլականներուն, իրենց փոխադարձ վերապահութեան, անվստահութեան, մեկուսացումի ու երբեմն՝ նաեւ թշնամութեան ողբով: Բաւական է դարձնել Եւրոպայի աղղերու պատմութիւնը՝ որոնք քրիստոնէութեան պաշտօնական ներկայացուցիչները կը նկատուէին ժամանակին՝ տեսնելու համար տմարդի վայրագութիւններու, կրօնական մոլեռանդ պայքարներու եւ անհանդուրժողութեան արեւնալի էջեր:

Չմոռնանք նաեւ ընկերային հարցը, որ ծնունդ տուաւ ներկայ անաստեղծութեան ամէնէն տարածուած ու կազմութեան մեծերէն մէկուն: Կրօնք մը կերպուած ձեւերէն մէկուն: Կրօնք մը կարելի չէ անշուշտ նոյնացնել ընկերական վարդապետութեան մը հետ, եւ ոչ ընկերային յեղափոխութիւն մը սպասել կրօնքէն, որ այնու իսկ պիտի դըրժէր իր առաքելութեան, եթէ գէնքի ու յեղափոխութեան զրդիւ մը հանդիսութեան մը յարաբերութեան, պահանջել, նոր: Իրաւացի է, սակայն, պահանջել, որ կրօնքի մը բարոյական ոյժը՝ հզօր ազդակ մը ներկայանայ բարեփոխելու ընկերութեան գիմադիծը, վտարելու ընկերութեան զեղծումները: Եւ սակայն, կերպութեան զեղծումները: Եւ սակայն, առ նուազ ութ դարերէ ի վեր, իր բոլոր մասերով քրիստոնէացած Եւրոպայի մը մէջ, կը տիրէին ամէնուրեք դասակարգային խտրութիւն, կեղեքումներ, իրաւունքներու անհասարկութիւն, որոնք

ծայր տուին նախ Փրանսական յեղափոխութեան պայթումին, եւ ոչ շատ ժամանակ ետք՝ համայնալարութեան երեւումին: Անտեղիօրէն չէ ըսուած թէ համայնալարութիւնը քրիստոնէութեան դայթակցութիւնը եղած է:

Այսպիսի ու նման երեւոյթներէ մըդուած՝ շատեր կրօնքը դերապանցուած երեւոյթ մը կը համարին, անցեալէ մնացած նշմար մը, ծնունդ՝ պատմական եւ ընկերաբանական ուրոյն պարագաներու եւ համապատասխան սոսկ որոշ չըջանի մը մարդուց հոգեբանութեան եւ մտայնութեան: Գարեբու ընթացքին երեւան եկող կրօնքները կը նկատուին լոկ իրրեւ անդրադարձ ցոյցացում մը այն կենսական հարցերուն՝ որ կը յուզէին իրենց ծագումը չըջապատող պատմական միջավայրը, եւ այն հոգեկան պահանջներուն՝ որ միտածմանակ կը յայտնուէին:

Այս եղբայրացութիւնը, սակայն, որ բնական հետեւողութիւն մը կը թուի ըլլալ քաղաքակրթութեան վերոյ շեւալ պայմաններուն, հիմնական դժուարութեան մը կ'ընդհարի՝ երբ իրողութիւնները կը քննուին աւելի խոր մակարդակի մը վրայ:

Կրօնքի ներկայութիւնը մարդուց հոգեկան կեանքին մէջ, ինչպէս կը մատնանը՝ չէ զրութեան սկիզբը, ունեցած է իրապէս «մարդկային» եւ «համամարդկային» երեւոյթի մը հանգամանքը, բառերուն ամբողջական իմաստով: Չափազանց անպատասխանատու գիրքաւորում մը պիտի ըլլար ժխտել բացարձակապէս այսօրինակ երեւոյթի մը համապատասխանումը հոգեկան խոր պահանջներու: Կարելի չէ արդարեւ ուրանալ, առանց յուսահատ եւ սկեպտիկ յոռետեսութեան մը յանձնուելու, մարդկային ձգտումը դէպի սահմանափակումներէ զերծ իրականութիւն մը, որ կարենայ լրիւ դոճացնել մարդուն «ըլլալու» ծարաւը, սիրելու եւ ապրելու, դմայելու եւ յաղենալու տենչը: Կրօնքը դերապանցական (transcendant) եղբ մը կը նշանակէր մարդկային այս նախադիմա ձկտումներուն: Ժամանակակից

